

– Ներե՛, Տիրուհիս, ես այս դիրքիս մէջ աշխարհիս ամենէն երջանիկ մարդն եմ, եւ յաւիտենականութեան մէջ եթէ քու ոտիցդ առջեւ այսպէս կենայի, արքայութիւն կը դառնար այն ինձ համար:

– Բայց ես կը հրամայեմ, Յովնան, եւ դու չե՛ս հնազանդիր,— ըսաւ Վասկանուշ քաղցրութեամբ, եւ ձեռքէն բռնելով նստեցուց քովը...— Ես չեմ ուզեր, որ իմ վրաս զգացած սերդ յանցանք համարիս. ես չեմ ուզեր, որ դու աշխարհիս յիմար օրէնքները աստուծոյ բնութեան հրամայած երեւններէն վեր դնես: Ես քեզ սիրեցի եւ դարձեալ կը սիրեմ եւ միշտ պիտի սիրեմ: Ես գոհ եմ քեզմէ, դու ինչ որ կրնէիր, եւ մանաւանդ ինչ որ այս վերջի ատեններս ըրիր ամէն էլ գիտեմ. միայն քու թուփերու մէջ գաղտնի զիս դիտելի չէի գիտեր: Քեզմով ես երջանիկ կրնայի լինիլ աշխարհիս վրայ՝ իմ այս միայնութեան կեանքով, աստուած այս վերջինը միայն կամեցաւ, որովհետեւ մարդիկ նորա օրէնքները ծամածռել յանդգներ են. ծնողք յիմար սովորութեանց եւ գոռոզութեան իրենց զաւակները եւ իրենց ծնելական գուրջը զոհել օրէնք ըրեր են. եւ ազնուատոհմութիւնը, երբ բարձրեն արհամարհոտ աչք կը ձգէ ասամկին վրայ եւ կը կարծէ թէ այդ անարգ արարածն իրեն համար է ստեղծեալ, ահա այսպէս կը պատժուի եւ գերութեան շղթայներու դառն ճաշակը կառնէ: Ո՛ր նախարարական ցեղն է, որ չունենայ մէկը Բաղդատ, եւ ի՞նչ ըրին, որ արժանի չլինին այդ անարգանաց եւ երկրին կործանման: Այս վանքին՝ զօր դու բանտ կ'անուանես՝ դռները բացուեցան ինձ համար եւ ինձ դիւրին էր դառնալ ծիրանիներու եւ բեհեղներու պլլուիլ եւ ես չուզեցի: Անոր համար չուզեցի՝ վասնզի գիտէի թէ Յովնան զիս կը սիրէր, եւ ես զինք կը սիրէի. անոր համար չուզեցի, որ զիս այս տեղէն հանելով՝ պիտի խնդրէին այնպիսի մարդու մը՝ մատնել, որ ոչ սիրտ ուներ, ոչ զգացմունք եւ որ մոլութեանց մէջ թաթախ եալ էր: Վասնզի շատ հազուադէպ են այդ նախարարաց մէջ ազնիւ զգացմունք եւ առաքիլութիւնք:— Բուռայ դռներնին կը ծեծեր. իսկ նոքա իրենց գիներբուաց եւ մեղկ անառակ երաժշտութեանց ձայներէն խլացած չէին լսեր թէ ո՛վ կ'ուզար: Նոյնը ահա կը տեսնեմ, որ արեւելեան եւ հիւսիսային Յայաստանի կը սպառնայ, եւ ամէն ոք ապշութեամբ թմբբեալ կը քնէ: Այո, Յովնան, այս աշխարհիս մէջ իջնել չուզեցի,